

ՀՏԴ 316.3

ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
Ջիջյան Ա. Ռ.**

Հոդվածում վերլուծաբար ներկայացվել է «սոցիալական աշխատանք» ինստիտուտի նպաստարար դերը հետխորհրդային հայաստանյան քաղաքացիական հասարակության ձևավորման գործընթացում: Սոցիալական աշխատանքի, սոցիալական ծառայության, սոցիալական վարչարարության գործընթացների դիտարկումը փոխլրացականության սկզբունքով հնարավորություն է ստեղծում առավել բազմակողմանի իրականացնել խորհրդառուների կարիքների բացահայտումն ու ադեկվատ աջակցությունը:

Բանալի բառեր. սոցիալական աշխատանք, հասարակական կազմակերպություններ, քաղաքացիական հասարակություն, սոցիալական կանխատեսելիություն, կարիքավորություն, հոգևոր-քաղաքակրթական զարգացում:

Նախաբան: Սոցիալական աշխատանքը՝ որպես մասնագիտական գործունեություն, առաջացել, ձևավորվել և զարգացել է «մարդը-սոցիալականորեն նշանակալի միջավայր» համակարգում հարաբերությունների, փոխազդեցությունների բարելավման և «հմուտ միջամտության» շնորհիվ նրանց փոխակերպման և զարգացման գործընթացի խթանմանը նպաստելու նպատակով [1]:

Սոցիալական աշխատանքն ուղղված է խոցելի՝ սոցիալական կյանքում իրենց լիարժեք մասնակցային ակտիվությունը կորցրած ու տարանջատված անձանց, խմբերի կարիքային հիմնախնդիրների լուծման աջակցությանը և հասարակական կյանքում նրանց վերստին ներգրավմանը: **Սոցիալական աշխատանքը գոյության է կոչված հասարակության կյանքում բարեկարգության հաստատման կարիքով և**

դիտավորությամբ [2]: Մարդկային համակեցության բարեկարգությանը նպատակամետ՝ վերջին տարիներին Հայաստանում ևս գիտական ընկերակցությունն ու նաև միջազգային, տեղական տարբեր կառույցներն իրականացրել են քաղաքացիական հասարակության՝ իր սոցիալ-տնտեսական, քաղաքական, ազգային և այլ առանձնահատկություններով հանդերձ, կայացման գործընթացի մի շարք ուսումնասիրություններ: Ուսումնասիրվել են քաղաքացիական հասարակության և ազգային անվտանգության փոխհարաբերությունն ու փոխկապվածությունը [3], վերլուծվել են հայաստանյան քաղաքացիական հասարակության կայացման և պետական քաղաքականության մշակման մեջ ընդգրկվածության գործընթացում առկա օբյեկտիվ ու սուբյեկտիվ խոչընդոտները [4, 5], բացահայտվել հասարակական կազմակերպությունների՝ որպես քաղաքացիական հասարակության նշանակալի բաղադրատարրի, զարգացման հեռանկարներն ու ռիսկերը [6], վերլուծվել քաղաքացիական հասարակության կայացմանը նպաստող և խոչընդոտող գործոնները [7] և այլն: Հայաստանում «սոցիալական աշխատանք» տեսագործնական գիտության կայացմանն ու կատարելագործմանն ուղենպաստ՝ ուսումնասիրվել են տարաբնույթ խոցելի խմբերի կարիքային հիմնախնդիրներ և մշակվել հաղթահարման ուղիներ, վերլուծվել սոցիալական աշխատանքի և սոցիալական քաղաքականության փոխներհյուսված հարաբերակցությունը, սոցիալական աշխատանքի պրակտիկայի տեսական հիմքերը:

Հիմնական մաս: Հետխորհրդային տարածքում տնտեսական, քաղաքական, սոցիալական կյանքում փոփոխությունները հանգեցրին անձանց ու խմբերի գիտակցությունում իրենց կենցաղի ու գոյապայմանների խնդիրների ճանաչման և լուծման դիտավորության ու անելիքի, ապա և՛ արվածի ու սպասելիք արդյունքի խնդրակարգում **սոցիալական կանխատեսելիության** արմատական փլուզմանը և անսպասելին ու անորոշը իրենց կյանքում անմիջականորեն ներկա ու վերապրման ենթակա տեսանելուն: Առավելապես անկայուն վիճակում հայտնվեցին ավանդական սոցիալապես խոցելի խմբերը և այն անձինք, ընտանիքները, խմբերն ու համայնքները, որոնք չկարողացան ադապտացվել և ադեկվատ արձագանքել տեղի ունեցող փոփոխություններին:

Նորանկախ հայոց պետականությունը սոցիալական կյանքում առաջացած երևույթներին իր անպատրաստության և դրանից բխող

շփոթվածության պատճառով ընկալում էր որպես բազմաթիվ խնդիրների խոնարհություն, որոնցից ընտրում և իրենց գորունակությանը հասանելի «անելիքի» հիմնախնդիր էին դիտում ու լուծման կամ կարգավորման պարտականություն հանձնառում ոչ բոլորը, ընդամին, ընտրվածները ոչ իրենց որպիսության բոլոր բաղադրիչներով: Պետությունն իրագործում էր սոցիալական կյանքի հիմնախնդիրների ընտրողականությունն և՛ քանակական, և՛ որակական տեսակետից: Եվ անհրաժեշտ օգնությունն էլ իրականացնում էր ոչ թե կարիքին ադեկվատության սկզբունքով, այլ՝ որչափ ինքն էր նվազեցմամբ սահմանում՝ մեկնարկելով միմիայն «իրեն տնտեսապես հարմարության» տեսակետից: Սակայն այս բոլորի մեջ պետության ռեսուրսների անբավարարության հետ մեկտեղ՝ նկատելի էր նաև **բռնություն**՝ կարիքի, օգնության ձևի, չափի, եղանակի ըմբռնման, սահմանման և փաստարկման մեջ: Երբևէ տեղի չէր ունենում կենսական հիմնախնդիրների, կարիքի և օգնության ավելի լայն ճանաչում և իր ռեսուրսների անբավարարության պատճառով իր կողմից արվողը որպես «պահանջվողից քիչ» ճանաչելու բացահայտ խոստովանություն: Այնինչ, այդպիսի խոստովանությունը կնշանակեր նաև, որ պետությունը ճանաչում ու սկզբունքորեն հանձն է առնում հետագայում իր հաշվետվություններում տնտեսական աճ գրանցելու պարագայում՝ իր իսկ կողմից խոստովանված անբավարարն այժմ արդեն լրացնելու պարտքն ու պարտականությունը: Այդպիսի խոստովանությունը կնշանակեր, որ պետությունը նույնժամ ստանձնում է նաև, հետագայում իր **կարողությունների առավելության պայմաններում՝ սկզբունքորեն որպես «կարիքավորություն»** բացահայտված ու գնահատված ամենայն այդ իրողություններին վերստին անդրադառնալու պարտավորություն և ուրեմն՝ «ըստ կարիքի» առաջնորդվող հոգածու աջակցության դիտավորության կատարումի իսկույններթ ու անընդմեջ և՛ նախաձեռնություն ու նախապատրաստություն, և՛ ապագայում իրականացում [2]:

Պետական կառուցվածքները, որպես իսկ պետական, նույնիսկ իրենց կողմից ընտրված խնդիրների բնույթից, բազմազանությունից թելադրվող մոտեցումների, գործունեության եղանակների ընդունման և իրականացման մեջ նկատել էին տալիս **անազատություն**: Պետական տարբեր աստիճաններում անհրաժեշտաբար ծնունդ էր առնում այն գիտակցումը, որ նման խնդիրների լուծմամբ կարող են և «թույլատրելի է», որ զբաղվեն նաև **հասարակական կազմակերպությունները (ՀԿ)**:

Էական է ամրագրել, որ **ՀԿ-ները հիմք են հանդիսանում քաղաքացիական հասարակության ձևավորման համար**: Նորանկախ Հայաստանում մարդկանց կյանքին անմիջապես վերաբերող կարիքային հիմնախնդիրների հաղթահարմանն աջակցային գործունեությամբ զբաղվող ՀԿ-ների գոյության իրավունքը ճանաչում գտավ պետական կառույցների կողմից, ինչը և ամրագրվեց օրենսդրական ակտերով ու նորմերով: Եվ նկատելի էր, որ ի տարբերություն պետական կառույցների, ՀԿ-ներն առավել ազատ էին առաջացած խնդիրները վերհանելու, քննելու դիտանկյան, մեթոդների, լուծման ուղիների մշակման և գործունեության եղանակների ընտրության հարցում:

Իսկ ի՞նչ է հասկացվում «հասարակական կազմակերպություն» ասելով: Անդրադառնալով Հայաստանի Հասարակական կազմակերպությունների մասին օրենքին՝ հանդիպում ենք հետևյալ սահմանում. «Հասարակական կազմակերպությունը... շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող (ոչ առևտրային) կազմակերպություն է՝ հասարակական միավորման տեսակ, որտեղ իրենց շահերի ընդհանրության հիմքի վրա, օրենքով սահմանված կարգով, միավորվել են ֆիզիկական անձինք՝ ՀՀ քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք՝ իրենց ոչ կրոնական հոգևոր կամ ոչ նյութական այլ պահանջումները բավարարելու համար» [9]: Ըստ իս, **ՀԿ-ները կամավորության հիմունքներով՝ ընդհանուր խնդիրներով, նպատակներով, արժեքներով, շահերով ձևավորված անձանց միավորումներ են՝ մարդկային ինքնության, համակեցության ու մշակույթի ներկատարելագործվող գոյության հոգևոր-քաղաքակրթական, որում և՛ սոցիալական, կրթական, առողջապահական և այլ, հոգենպաստ ու կենսանպաստ հիմնախնդիրների հաղթահարման իրենց անշահախնդիր ու անանձնական սիրո առաքելությունն իրականացնող**:

Հայաստանում իրենց գործունեությունը սկսեցին ծավալել մի շարք միջազգային կազմակերպություններ, որոնց հետ մեկտեղ՝ ստեղծվեցին ու իրենց յուրատեսակ գործառնություններով կայացան նաև նոր հասարակական կազմակերպություններ [8], որոնցում և ներառված էր սոցիալական աշխատանք՝ ուղղված անձանց, խմբերի, համայնքների տարատեսակ ու բազմաբովանդակ կարիքավորության հաղթահարմանը: **Բարեգործական հիմունքներով հասարակական**

կազմակերպությունների առաջացումն ու ծավալումը և հենց սոցիալական աշխատանքի կայացումը սկզբունքային ու հիմնարար գործոններ են քաղաքացիական հասարակության կայացման և ինքնակատարելագործմամբ հանդերձ գործառնության համար: Ինչո՞ւ: Այստեղ էական է հայտորոշել՝ վերափմաստավորմամբ հանդերձ, «քաղաքացիական հասարակություն» հասկացությունն ու դրանով նշվող մարդկային իրողությունը: Քաղաքացիական հասարակության՝ որպես սոցիալական երևույթի, ընկալումն անցել է զարգացման և վերափոխման երկար գործընթաց, այդ հարցերին անդրադարձել են խոշորագույն փիլիսոփաներ՝ ի դեմս Պլատոնի, Արիստոտելի և Ցիցերոնի, Լոկի, Հոբսի և Կանտի, Հեգելի և Մարքսի[10]: Ըստ Յու. Իրխինի՝ «քաղաքացիական հասարակությունը» հասկացվում է որպես ոչ պետական, սոցիալական, հոգևոր, կրոնական, բարոյական, ընտանեկան, ազգային և այլ հարաբերությունների համալիր, անձանց և կամավոր հիմունքներով ստեղծված կազմակերպությունների ինքնադրսևորման ոլորտ, որը օրենքով պաշտպանված է պետական կառույցների անմիջական միջամտությունից [11]: Հայաստանյան քաղաքագիտական դիսկուրսում «քաղաքացիական հասարակություն» տերմինը սովորաբար օգտագործվում է որպես ընտանիքից, պետական կառուցվածքներից և սոցիալական ինստիտուտներից դուրս գտնվող ասպարեզ, անհատական կամ կոլեկտիվ հիմունքներով ստեղծված կազմակերպությունների և հաստատությունների գործողություններ՝ ուղղված հասարակական (հանրային) շահերի պաշտպանությանը [12]: Ըստ իս, սակայն, քաղաքացիական հասարակությունը մարդկային ինքնությունների ազատական հոժարակամությամբ հանձնառյալ հավաքական կամոք ամենայն բարյաց իր ձեռքբերումների համատեղումով համագոր համակեցություն է՝ պետական ու հասարակական իր կառույցներով, մարդասիրությունից բխող արդարության՝ երկուստեք խորընթացող ու առավելացող հոգևոր զգացմունքներով ու իդեաներով ներկրթվող ու ներկատարելագործվող, փոխներգործունորեն հոգեկեցույց ու կենսարար, հոգևոր-քաղաքակրթական բարեկարգության ստեղծարար ու հոգաձու փոխգործունեություն կենսագործող:

Քաղաքացիական հասարակությունը առաջնահերթորեն հարկ է ընկալել որպես քաղաքական, սոցիալական, տնտեսական, իրավական և այլ հարաբերությունների **սուբյեկտ**, որպես այդ հարաբերությունների կառուցակարգման **նախաձեռնող ու ստեղծող**, որն, ըստ էության,

ստեղծում է «պետություն» կառույցը, օրենքների համակարգը և, իհարկե, նաև հասարակական կազմակերպությունները՝ միշտ ապահովելով այդ ամենի շարունակականորեն կատարելագործվող ու զարգացող հնարավորությունը և ստեղծարար իր գործունեությամբ առաջարկելով տարաբնույթ ծրագրեր՝ ուղղված այդ հարաբերությունների բարեկարգմանը: Անշուշտ, քաղաքացիական հասարակությունը այդ հարաբերությունների, կառույցների ու կազմակերպությունների ոչ միայն սուբյեկտ, այլ նաև **օբյեկտ** է: Մակայն «քաղաքացիական հասարակությունը» պետական և հասարակական կառույցների գործունեությունն ու ներգործությունն իր վրա կրող **օբյեկտ** դառնում է ոչ թե այդ կառույցների և օրենքի համակարգի հարկադրյալ բռնությանը լիովին ենթակա լինելով, այլ միմիայն **ազատական հանձնառությամբ ստանձնելով** իր իսկ ստեղծած բոլոր այդ կառույցների նկատմամբ և՛ իրավունքներ, և՛ պարտականություններ: Դա նշանակում է, որ քաղաքացիական հասարակության պարագայում բուն հասարակությունը և հասարակության ինքնակազմակերպվածության հնարավորությունները չեն սահմանափակվում տվյալ պետական կառուցակարգման որպիսությամբ:

Քաղաքացիական հասարակությունը որպես այդպիսին կայանում ու ներկայանում է նախ և առաջ իր **հոգևոր-քաղաքակրթական որակով**, որի հիմքում ընկած է **մարդասիրությունը և՛ որպես հոգևոր զգացմունք, և՛ որպես հոգևոր ԻԴԵԱ**: Մարդկության պատմության մեջ մարդասիրության մշտապես առավել խորացող ըմբռումից բխում է արդարության նորովի ընկալում, որն իր արտացոլումն է գտնում իրավական և պետական կառուցակարգման համակարգում [13] և մարդկային փոխգործունեության բոլոր՝ սոցիալական, քաղաքական, տնտեսական, կրթական... ոլորտներում: Քաղաքացիական հասարակությունը այդպիսին է, երբ մարդասիրությունից բխող արդարության նորովի ըմբռնման հնարավորություններն իրականացնում է իր ինքնակազմակերպման՝ պետական և հասարակական կառուցակարգման ասպարեզներում: Եվ դա նշանակում է, որ քաղաքացիական հասարակությունը չի ներկայանում որպես մեկուսի ու առանձին և ինքնուրույն՝ իր իսկ ստեղծած պետական և հասարակական կառույցներից, այլ, իրենում ներառելով դրանք, որպես հենց քաղաքացիական ու իսկը քաղաքակրթական հասարակություն է ներկայանում այդ ամենի միասնությամբ, որում, սակայն, այդ կառույցները պետք է սկզբունքորեն **հնարավորեն, նպաստեն և**

ապահովեն մարդկային ինքնության ու համակեցության մշտապես ներկատարելագործվող ու զարգացող լինելիությունը: Այդ կառույցները պետք է լինեն **հոգեկեցույց ու կենսաբար** մարդկային ինքնությանն ու համակեցությանը, այլ ոչ թե բռնադատեն և ուրեմն՝ **կասեցնեն, խափանեն, խոչընդոտեն և ի չիք դարձնեն** քաղաքացիական հասարակության լինելիությունը որպես ազատական ստեղծարար սուբյեկտ, այդ կերպով հաստատագրելով միայն իրենց ինքնանպատակ գոյությունը այլևայլ իրենց շահախնդրություններով:

Մարդու կողմից ստեղծված բոլոր կառույցները սկզբունքորեն չպետք է լինեն ինքնանպատակ՝ մարդուն ու հասարակությանը վերաբերվելով որպես իրենց իսկ գործողության և ներգործության սուսկ կրավոր օբյեկտ՝ դրանով իսկ ի չիք դարձնելով քաղաքացիական ու հենց հոգևոր-քաղաքակրթական հասարակությունը որպես այդպիսին: Մարդու կողմից ստեղծված ամենայնը՝ պետական ու հասարակական կառույցները, **քաղաքակրթական ձեռքբերումներ են** ու հենց **մշակույթ**՝ միայն եթե ազատագրում են մարդուն, առավելացնում ազատության աստիճանները դեպի առաքինություններով ինքնակատարելագործվող ու զարգացող մարդկային ինքնության ու կենսակերպի, այլ ոչ թե ստրկացնում ու գերի են դարձնում մարդուն իրենց իսկ գոյության ինքնանպատակ լինելիությանը: **Քաղաքացիական և քաղաքակրթական հասարակությունը այդպիսին է, եթե պաշտպանված է նրա ազատական ընտրությամբ ու հոժարական հանձնառությամբ ստանձնելու իրավունքը** մարդկային փոխգործունեության պետականորեն ու հասարակականորեն կառուցակարգման նախաձեռնության, ստեղծման, դրանցում ներմասնակցության բոլոր խնդիրներում: Քաղաքացիական հասարակության կողմից ստեղծված կառույցների քաղաքակրթական որակը սկզբունքորեն կախված է հենց մարդասիրության և դրանից բխող արդարության հոգևոր իդեաներով՝ մարդկային կյանքի նկատմամբ հոգեկեցույց ու կենսաբար գործունեությամբ սահմանող կառուցակարգումից: Իսկ դա նշանակում է, որ կարևորագույն քաղաքակրթական խնդիրը՝ մարդուն, նրա ընդհանուր կենսակարգը և անձնական կենսակերպը փոխելու և հենց բարեկարգ զարգացմանը հնարավորելու, նպաստավորելու ու ապահովելու նպատակային գործունեությունն է:

Սոցիոլոգիան, կոչված լինելով մարդկային համակեցության բարեկարգությանը, իր ստեղծումից ի վեր չի կարողացել փոփոխել և ոչ մի անհատ մարդու, կոնկրետ ընտանիքի, խոցելի որևէ խմբի, ազգի և

ողջ հասարակության **մարդկային ինքնությունը**, և լավագույն դեպքում, ընդամենը, կարողացել է միմիայն առաջարկել **սոցիալական կառուցվածքների** օպտիմալ փոփոխությունների ճանապարհով մարդկային համակեցության բարեկարգմանն ուղղված նպաստավոր ուղիներ՝ և՛ որպես տեսական, և՛ որպես կիրառական սոցիոլոգիա իր լինելության հնարավորություններով մնալով գուտ տեսական իր որակում և իներտ մնալով մարդկային կյանքի ինքնության փոփոխության ու նախընտրելիորեն կատարելագործման հոգևոր-քաղաքակրթական գործում:

Իսկ սոցիալական աշխատանքի (սատարագիտության) բուն կոչումն է՝ շահառու կամ խորհրդառու մարդկանց հետ համագործակցության սկզբունքով փոխել ու հենց կատարելագործել մարդկային ինքնությունն ու կենսակերպը, իսկ օրենսդրական նախաձեռնությամբ՝ նաև ընդհանուր կենսակարգը, ինչին և հասնում է իր ամենօրյա գործունեությունում: Բնաշխարհի ամենայն գոյավորների մեջ ամենաբարդը մարդն է, և ամենաբարդը մարդու փոփոխմանը հասնելն է ինքնակատարելագործման ճանապարհով, սակայն սոցիալական աշխատանքի ամենօրյա գործունեությունում սա վկայված փաստ է, որին և առնչվում է, գիտի ու հասնում է յուրաքանչյուր սոցիալական աշխատող: Նշենք, որ այս խնդիրն ունի նաև գործնական փիլիսոփայությունը՝ հանձին բարոյագիտության, և սոսկ ներաձնականի փոփոխման ու բարեկարգման նպատակն ունի նաև հոգեբանությունը, իսկ մարդկային փոխգործունեությունում սոցիալական բարեկերպությանը հասնելու նպատակն ունի սոցիալական հոգեբանությունը: Մարդկային ինքնության կայացման խնդիրների հետ անմիջականորեն առնչվում է նաև մանկավարժությունը: Եվ հայտնի է, որ սոցիալական աշխատանքն իր գործունեությունում՝ վերախմաստավորմամբ հանդերձ, ներառյալ ունի այդ գիտությունների ձեռքբերումները: Սոցիալական աշխատանքը մարդկության հոգևոր-քաղաքակրթական զարգացումն իրագործող առավելաչափ անհրաժեշտ ու նախընտրելի այս գործի՝ **մարդկային ինքնության ու կյանքի բարեկարգման** առաքելության, Հայաստանում իր սկզբնավորումը և առաջնահերթորեն ու մինչ այսօր նաև առավելաչափ զարգացումն ունեցել է հենց հասարակական կազմակերպություններում և ապա միայն՝ ներառվել ու գործառվել պետական կառույցներում:

Հասարակական կազմակերպությունների և պետական կառուցվածքների համագործակցության հիմքում ընկած են մի շարք նշանակալի գործոններ.

- քաղաքացիական հասարակության կառուցվածքային զարգացածությունը՝ հասարակական կազմակերպությունների թիվը, ուղղվածությունը, ակտիվության հիմքում ընկած արժեքները,
- քաղաքացիների մասնակցաբար ներընդգրկվածությունը հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող սոցիալական, կրթական, մշակութային, էկոլոգիական ծրագրերին,
- քաղաքացիական հասարակության սոցիալ-քաղաքական ազդեցիկությունը պետության, իշխանության գործառնության վրա:

Եզրահանգում: Սոցիալական աշխատանքը կարիքավորի և հենց կարիքավորության հաղթահարմանը տկարունակի և, ընդհանրապես, կարիքավորության նկատմամբ աջակցության և կամ հոգածության հիմնախնդիրներում *սոսաջամարտիկ* է, քան պետությունն ու հասարակական գիտակցությունը, ներկայանալով ամենաէական, բարդ, դժվարին ու անհայտի ոլորտում հենց որպես *սոսաջաքայլ* պիտներ: Սոցիալական աշխատանքը կոչված է հենց մարդկային հոգևոր կեցողության՝ բարոյա-հոգեբանական, կրթական, մշակութային ու մասնագիտական..., և սոցիալական կյանքին մասնակից բարեկարգ ու բարեկեցիկ կենցաղավարության խնդրակարգում պարտություններ կրած անձանց ու խմբերին, ըստ կարիքին ադեկվատության սկզբունքի, կարեկից ու նպաստավոր աջակցությամբ գորավիզ լինելու և ինքնության կարողությունների աճի ու պայմանների փոփոխմամբ՝ ոչ այլևս խոցելի, վտանգված կամ անապահով կարգավիճակով սոցիալական կյանքում վերստին ներգրավելու:

«Սոցիալական աշխատանք» տեսագործնական գիտությունը՝ որպես մարդկային ինքնության, կենսակերպի ու կենսակարգի բարեկարգման նպատակամետ գիտափորձառու մասնագիտական գործունեություն, իր կոչմանը համապատասխան՝ առավելաչափ կայացել է և շարունակում է կայանալ ու զարգանալ հիմնականում ՀԿ-ների շրջանակներում: Քաղաքացիական և հենց քաղաքակրթական հասարակության կայացումն ու ներկատարելագործումը սոցիալական աշխատանքի, սոցիալական ծառայության, սոցիալական վարչարարության և սոցիալական քաղաքականության գործընթացների փոխլրացականության սկզբունքով դիտարկմամբ՝ հնարավորություն

կատեղծի առավել բազմակողմանի իրականացնել խորհրդառուների կարիքների բացահայտման և ադեկվատ աջակցման կազմակերպումը:

СОЦИАЛЬНАЯ РАБОТА, НЕПРАВИТЕЛЬСТВЕННЫЕ ОРГАНИЗАЦИИ И СТАНОВЛЕНИЕ ГРАЖДАНСКОГО ОБЩЕСТВА В АРМЕНИИ

Джиджян А. Р.

В статье анализируется роль института «социальной работы» в процессе формирования армянского гражданского общества постсоветского периода. Наблюдение за процессами социальной работы, социального обслуживания и социального управления на основе принципа комплементарности дает возможность более полно раскрывать нужды бенефициариев и оказывать им адекватную поддержку.

Ключевые слова: социальная работа, неправительственные организации, гражданское общество, социальная предсказуемость, нуждаемость, духовно-цивилизационное развитие.

SOCIAL WORK, NGO AND CIVIL SOCIETY FORMATION IN ARMENIA

Jijyan A. R.

The article analyzes the role of the institute of “social work” in civil society formation of post-Soviet Armenia. Observing the processes of social work, social service and social governance based on the principle of complementarity provides an opportunity to more comprehensive disclosure of the needs of beneficiary's and to provide adequate support.

Keywords: social work, NGO, civil society, social predictability, neediness, spiritual-civilization development.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Larkin H. Social Work: as an Integral Profession.// AQAL, Journal of integral theory and practice. Summer 2006, Vol. 1, No. 2 www.integraluniversity.org հասանելի է 11.10.2017
2. Ջիջյան Ա., Քոչարյան Ռ. Սոցիալական աշխատանքը, բարեգործությունը և քրիստոնեական կենսակերպի արմատավորումը: Երևան: «ԴԱԼԼ» հրատարակչություն: 2009: 576 էջ:

3. Բեգլարյան Ա. Քաղաքացիական հասարակության դերն ազգային անվտանգության ապահովման գործընթացում. իրավիճակը Հայաստանում// 21-րդ դար: 2016: 3(67): էջ 134-153:
4. Gevorgyan V. The Next Step in the Development of Armenian Civil Society, Yerevan. Open Society Foundation. 2017. 27 p. <http://www.osf.am/wp-content/uploads/2017/11/The-Next-Step-in-the-Development-of-Armenian-Civil-Society-paper.pdf>, հասանելի է 10.02.2019, 12:15
5. Gevorgyan V. Key Obstacles for Armenian Civil Society Engagement in Policy Making Processes https://www.academia.edu/30620087/Key_Obstacles_for_Armenian_Civil_Society_Engagement_in_Policy_Making_Processes, 1 հասանելի է 10.02.2019, 12:15
6. Հայաստանի հասարակական կազմակերպությունների զարգացման հնարավորությունները և ռիսկերը: «ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ» հակակոռուպցիոն կենտրոն: Երևան: 2011: 37 էջ:
7. Осипов В. Г. Общественное движение Армении в контексте новых глобальных вызовов: Перспективы и препятствия консолидации НПО // Հասարակական շարժումը Հայաստանում արդի փուլում. Նոր մարտահրավերներ և հեռանկարներ: Խորհրդածողովի նյութեր: Երևան: «Ասողիկ» հրատ.: 2014: էջ 19-27:
8. Ստեփանյան Լ. ՀՀ-ում հասարակական կազմակերպությունների գործունեության առանձնահատկությունների մասին // «Բանբեր» ԵՊՀ: Միջազգային հարաբերություններ. Քաղաքագիտություն: 2015: N 2: էջ 60-75: http://ysu.am/files/07L_Stepanyan.pdf, հասանելի է 20.09.2017.
9. ՀՀ օրենք «Հասարակական կազմակերպությունների մասին» հոդված 3, ընդունվել է 04.12.2001թ. <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1295>
10. Кожевников С.Н. Гражданское общество: понятие, основные признаки, предпосылки формирования в России // Вестник Нижегородского университета им. Н.И. Лобачевского. 2002. N 1- [http://www.unn.ru/pages/vestniki_journals/99990195_West_pravo_2002_1\(5\)/B_4.pdf](http://www.unn.ru/pages/vestniki_journals/99990195_West_pravo_2002_1(5)/B_4.pdf), հասանելի է 20.09. 2019.

11. Ирхин Ю. В. Гражданское общество в современной России: управляемое, направляемое или воздействующее? - «ARS ADMINISTRANDI» («Искусство управления»), 2010, N 1.
<https://cyberleninka.ru/article/n/grazhdanskoe-obschestvo-v-sovremennoy-rossii-upravlyаемое-napravlyаемое-ili-vozdeystvuyushee>, հասանելի է 20.09. 2019
12. CIVICUS Civil Society Index Rapid Assessment: Armenia Country Report. Yerevan. 2014. 36 p.
13. Քոչարյան Ռ. Պատմությունը և Հերմենևտիկան: Գիրք 1. Սովսես Խորենացու պատմագիտական հայեցակարգը: Երևան: «Փրինթինֆո» հրատ.: 2016: 632 էջ:

Տեղեկություններ հեղինակի մասին

*Զիջյան Ա. Ռ. – փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ
Հայկական պետական մանկավարժական համալսարան
Էլ. փոստ՝ jijyan@mail.ru*

Տրվել է խմբագրություն 10.10.2019